

այդ գումարը չի վատնվում: Գործի համար դրամ չինայոյ աղ-  
գը՝ տեսնելով որ Ա. Էջմիածնի մէջ պահպանվում է մի ձեմարան,  
ուր աւելի քան երեք հարիւր աշակերտ է ուսանում, որոնցից  
երկու հարիւրը գիշերօթիկ են—ի հարկէ չի խնայելու եւ սորա  
համար: Այս հանգամանքները ի նկատի առնելով ձեմարանի  
գրութեան մասին միանգամայն ապահով կարող ենք լինիլ եւ  
հանգիստ սրտով շարունակել մեր գործը:— Գառնանք 1882—3  
ուս. տարուայ տեղեկագրին:

## ՏԵՂԵԿԱԳԻՐ

1882—3 ուս. տարուայ

Յընթացս 1882—3 ուս. տարուայ Մանկ. ժողովը գումարե-  
ցաւ 24 անգամ ձեմարանիս վերաբերեալ զանազան խնդիրների  
վերաբերութեամբ: Սոցանից գլխաւորներն են.

Տարուայ սկզբում բացուեցաւ Երրորդ լսարանը, որով պէտք  
է բոլորուէր ձեմարանի մասնագիտական ընթացքը: Ինչ-  
պէս որ առաջին երկու լսարանները մանկավարժական ուղղու-  
թեամբ էին կազմակերպուած, այնպէս էլ նոր բացուած Գ. լսա-  
րանին նոյն ընթացքը նշանակուեցաւ մանկավարժական եւ փի-  
լիսոփայական առարկաներով եւ գործնական պարապմունքնե-  
րով: Այնպէս որ մի կողմից մանկավարժութեան եւ սորա օժան-  
գակ փիլիսոփայական գիտութեանց տեսութիւնն էր աւանդ-  
վում, միւս կողմից գործնական կրթութիւնն էր մատակարար-  
վում մանկավարժական արուեստի մէջ ընտելանալու համար՝  
փորձնական դասերի, խորհուրդների եւ ժողովների միջնորդու-  
թեամբ, որոնց ղեկավարում էր պ. Սեդրակ Մանգինեանը: Ան-  
ցեալ տարի մենք ուրախութեամբ յիշեցինք, թէ ինչ մեծ օժան-  
գակութիւն պէտք է լինէր վարժոցի տեղափոխուելովը նախկին  
ժառանգաւորաց Գարոցի մէջ: Գորանով ոչ միայն ամբողջապէս  
ծխական գարոցի երեք բաժանմունքների դասատուութիւնը  
յանձնուելու էր մեր լսարանցիներին իւրեանց վարժութեան հա-  
մար, փոխանակ մի բաժանմունքի, ինչպէս որ առաջին տարին  
էր քանի ձեմարանը իւր իւրական վարժոցը չունէր, այլ եւ ձե-  
մարանի առաջին դասարանն էլ փոխադրվում էր այնտեղ այն  
յուսով, որ եթէ փորձը յաջողէր, ապագայում ձեմարանի Բ.

եւ Գ. դատարաններն եւս փոխադրուէին եւ այսպէս թէ մեր լսարանցիներն վարժութեան ասպարէզը կլայնանար եւ թէ ձեւաւորանք աւելի կանոնաւորուած դպրոցական մաս կունենար անտեսական զգալի թեթեւութեամբ: Բայց կառավարել մի դպրոց մի քանի բաժանմունքներով միայն վարժուող ուսանողների ժողորդութեամբ անհնարին է: Հարկաւոր էր նշանակել օժանդակ ուսուցիչներ: մենք խոստացանք՝ բայց մեզանից միանգամայն անկախ պատճառներով չկարողացանք մեր խոստումը կատարել՝ որով թէ վնասեցինք վարժոցի ուսման կանոնաւորութեանը եւ թէ չափազանց ծանրարեւոնեցինք մեր լսարանցիներին գործնական պարապմունքներով ի վնաս նոցա տեսական զբաղմունքների: Դժբաղգաբար առաջիկայ տարին եւս նոյն անյաջող հանգամանքներով ենք սկսում, ուստի Բ. եւ Գ. դատարանների միացման խնդիրը վարժոցի հետ դարձեալ սէտք է յետաձգուի:

Վարժոցի կազմակերպութեան եւ մեր ուսանողաց գործնական պարապմունքների ղեկավարութեան մասին անցեալ տարուայ տեղեկագրիս մէջ հանգամանորէն խօսել ենք. ուստի աւելորդ է նորից կրկնել այն ամենը. միայն այսքանս բաւական է ասել, որ առանձին վարժոց ունենալով բոլոր յարմարութիւնների հետ ի միասին մենք անյարմարութիւններ եւս ունինք, որոնց առաջը թէեւ այս տարի չենք կարողացել առնել, բայց ապագայի համար անշուշտ անօրինելու է. մենք չունինք վարժոցի համար շինութիւն. հին ժառանգաւորաց Դպրոցի շինութիւնը իւր անյարմարութիւններով ամենին յայտնի է. գորածէջ երեխայ կրթել կարող ենք ասել անհնարին է: Միւս կողմից վարժոց մտնել ցանկացողների թիւը այնքան մեծ է, որ ամենքին չենք կարողանում բաւականութիւն տալ, շատերը մնում են դուրսը: Բայց եւ այնպէս ստիպուած ենք լինում ամեն մի բաժանմունքի մէջ շատ երեխաներ ընդունելու: Աշակերտաց շատութիւնը թէ շինութեան կողմանէ անյարմար է, քանի որ նստելու տեղ չկայ մեր մնւթ եւ փոքր սենեակներում եւ թէ այն կողմից, որ նորավարժ ուսուցչաց գործն է դժուարեցնում եւ ի հարկէ այսպիսով վարժոցի յառաջագիմունքեանը արգելք լինում: Ազդարշապատում անցեալ տարի գոնեայ մի ծխական դպրոց կար, ուր կարող էին դիմել մեզ մօտ չընդունուածները, իսկ այս տարի այդ դպրոցը փակուեցաւ եւ մենք ստիպուեցանք այնքան ա-

շակերտ ընդունել, որ չենք կարողանում տեղաւորել մեր սենեակներում: մի ահագին բազմութիւն էլ գեռ դուրսը մնաց: Այս հանգամանքը գրաւել է Ամենապատիւ Արքայապետ Տեղակալ Հօր ուշադրութիւնը եւ լիայոյս ենք որ վաղարշապատացիք չեն խնայելու իւրեանց ձեռնառութիւնը այս գործում եւ այս տարի իսկ կը հոգան վերացնելու գոնեայ մեր ունեցած անյարմարութիւնների մի մասը: Սորա համար հարկաւոր է որ Վաղարշապատը կամ ունենայ իւր առանցիկ դպրոցը եւ մենք վարժոցի ամեն մի բաժանմունքի մէջ պահենք ոչ աւելի քան 20—25 աշակերտ եւ կամ գոնեայ մի այնպիսի բնակարան տայ, ուր կարողանանք զետեղել վարժոցի մի երկու բաժանմունքի աշակերտներին: Եթէ այս ջլինի մենք ստիպուած կլինինք կարճելու աշակերտաց թիւը:

Ուսումնական ժողովը գեռ առաջի տարուանից սկսել էր գրադուել ընդհանուր ծրագրի կազմութեամբ եւ սորա համար լրագրութեան միջոցով գիմնաց հայ հասարակութեանը խնդրելով նպաստել այդ գործին խորհուրդներով, ծրագիրներով, դիտողութիւններով եւայլն: Մեր հրաւէրը մնաց միանգամայն առանց ուշադրութեան, չնայելով որ մեր կազմելի ծրագիրը միայն ձեւմարանիս համար չէր, այլ բոլոր ազգային ուսումնարանաց: Այս պատճառով անցեալ տարի ծրագրի գործը մնաց անկատար: Այս տարի էլ գիմնացինք արդէն ի ձեռն Ա. Սինօզի մեր թեմական վերատեսուչներին խնդրելով նոցանից իւրեանց իրաւասութեան ներքոյ եղած ուսումնարանների ծրագիրները իւրեանց անձնական դիտումներով հասցնել մեզ եւ դարձեալ մեր խնդիրը մնաց առանց պատասխանի: Ուստի մենք կազմեցինք մի ծրագիր, որ առաջարկումենք հայ հասարակութեան քննադատութեանը:

Մեր ծրագրով բոլոր ազգային ուսումնարանները չորս կարգի են բաժանւում, իւրաքանչիւրը երեք տարուայ ընթացքով: Այս ուսումնարաններն են. ծխական դպրոց, հոգեւոր դպրոց դպրանոց եւ ճեմարան: Ծխական եւ հոգեւոր դպրոցները պէտքէ ունենան եւ չորրորդ լրացուցիչ դասարաններ այն աշակերտաց համար, որոնք իւրեանց ուսումը շարունակելու չեն: Այդ լրացուցիչ դասարանների համար մենք ծրագիր կազմած չու-

նինք: Մեր ցանկութիւնն է եղել ուսումնարանների ծրագիրը այնպէս կազմել, որ մի դպրոցից միւսը՝ բարձրը մանուկը այն անյարմարութիւնները չունենայ, ինչ որ մենք ամեն քայլափոխում հանդիպում ենք: Մեր ծրագիրը կարող է փոփոխութիւնների ենթարկուել եւ այդ կողմից մենք ամենայն շնորհակալութեամբ կրենք ազգային բոլոր ուսումնարանաց մտնկալարժեքական խորհուրդների եւ փորձառու անձանց դիտողութիւնները, բայց մի բան միայն ցանկալի պէտք է լինի, որ մեր զանազան կարգի ուսումնարանները իւրեանց ծրագրով իւրեար հետ սերտ կապուած լինին:

Ահա մեր ծրագիրը.

### ԺՐԵԳԻՐ.

Ա. ԱՐԺ-ՈՅ (Ծխական դպրոց)

1. Բարոյակը ընդ-ընդ.

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մարդը իբրև անգամ ընկերութեան՝ պարզ և ընտանեկան գաղափարներով, որպէս նկարագրում է մեր ազգային բանաստեղծութիւնը.

Ձեռնարկ՝ Ազգային ընտանեկան աշխարհ պ. Ս. Մանգինեանի.

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մարդը ժողովրդեան երեակայութեամբ իբրև գիւցազնացեալ անգամ ընկերութեան.

Ձեռնարկ՝ Ազգային գիւցազնական աշխարհ պ. Ս. Մանգինեանի.

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մարդը իբրև անգամ ընկերութեան իւր պարզ նախնի և պատմական կեանքով.

Ձեռնարկ՝ Նահապետական և հայրենի աշխարհ պ. Ս. Մանգինեանի.

2. Կրօն.

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Աղօթք. բացատրել ոչ միայն աղօթքների իմաստը, այլ և առանձին խնամքով վերացնել երեխայոց անիմաստ աղօթասացութիւնը, քանալով որ աղօթքը նոցա զգացմանց արտայայտութիւն լինի.—Տօների նախընթաց օրերը ծանօթացնել երեխայոց այդ տօների հետ և բացատրել.— Շաբաթական խրատ վարժոցի բոլոր աշակերտաց համար իմիտօին, նիւթ

առնելով նոցա շարաժական կեանքից և քարոզելով նոցա Աստուածա-  
յին պատուէրները:

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյնը աւելի ընդարձակելով և տեղեկութիւն տալով ժամասացու-  
թեան գլխաւոր կտորների մասին:

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյնը:

3. ԶՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ.

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նիւթ առնել քարոյակրթութեան դասերից, տարուայ եղանակներից  
և կեանքից. զոր օրինակ՝ ուսումնարան, ծնողական տուն, մարդ և ա-  
նասուն, ժամանակ և եղանակ, ամառ և ձմեռ և այլն, ինչպէս ցոյց է  
տուած ազգային ընտանեկան աշխարհի ուսուցչաց համար նշանակուած  
մասի մէջ:

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նիւթ առնել նոյն աղբիւրներից. զոր օրինակ՝ ուսումնարան, աշուներ,  
տուն, քաղաք, աշնան վերջին օրերը, ընտանի կենդանիներ, ձմեռ, նոր  
տարի, մարդկային կեանք, աշխատանք, նիւթեր, գոյք, ձեւեր, կշիռք,  
դարուեր պարտիզում և դաշտում, ընտանի կենդանիներ. ամառ և  
այլն: Տեղագրութիւն Սասունցի Պաւթի:

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյն խորագրերը աւելի ընդարձակ. հոգուական և երկրագործական  
կեանք իւրեանց մանրամասնութիւններով. և իրրեւ լրումն տալ համա-  
նօտ տեղեկութիւններ միւս դասակարգերի մասին: Մարդկային արու-  
եստագիտական առարկաների մասին խօսելիս տարրական տեղեկութիւն-  
ներ տալ ֆիզիքայից և քիմիայից, Հայրենիքի և Պաղեստինէի համեմա-  
տական աշխարհագրութիւնը: Արկրի գնդաձեւութիւնը, Պարզ յիշատա-  
կութիւն աշխարհի մասերի:

4. Հայաց լէզու:

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Սկզբնական ուսումն գրագիտութեան, նախ գրել և ապա կարգալ  
Պէտք է այնքան վարժել, որ մանուկը կարողանայ կարգալ բառ առ բառ  
ամեն գիր, և եթէ այդ դժուար լինի, փորձէ լուծել բառը վանկերի և  
վանկերը հնչիւնների՝ սկսելով ձայնաւորից և հետ զհետ կցելով նորան  
բաղաձայնները: Պէտք է կարողանայ գրել, եթէ ոչ անսխալ, գոնեայ  
բոտ արտասանութեան ուղիղ: Բերանացի հեքիաթներ և անգիր ոտա-  
նաւորներ:

## Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նախագասու թիւններով և առգանու թեան նշաններով կարգալ թե-  
լատրութեամբ գրելու վարժութիւն, ուղղագրութիւնը ստուգել. հար-  
ցերով լուծել նախագասու թիւներ, ուղիղ արտագրել առանձին տետրակի  
մէջ սխալ գրած բառերը, կազմելով նոցանից համապատշաճ խմբեր,  
Վարդացածի համառօտ պատմութիւն և գրութիւն, Անգիր ոտանաւոր-  
ներ:

## Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Վարդացածի բովանդակութիւնը հասկանալ, վարժել գեղեցիկ ընթեր-  
ցանութեան և այն՝ ամբողջ պարբերութեամբ, Սկզբունք քերականու-  
թեան. մասանց բանից որոշումն, հոլովումն և խոնարհումն, ուղղա-  
գրութեան կանոններ, թելատրութեամբ անսխալ գրել. կարդացածի բը-  
նարաններով փոքրիկ շարագրութիւններ, Անգիր ոտանաւորներ:

## 5. Թոսայ լէզո-:

## Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Գրել կարգալու սկիզբն. շուտով սկսել Ռուսաց լեզուով գրուցադրու-  
թիւն. ամեն մի հայերէն ասած նախագասութիւն կրկնել ռուսերէն թէ  
խմբովին թէ առանձին ընտելացնելով աշակերտաց լսողութիւնը ուղիղ  
արտասանութեան, Ժամանակի ամենափոքր մասը պէտք է նուիրել  
թարգմանութեան և հայերէն խօսակցութեան, Տարուայ վերջը հայե-  
րէնը պէտք է լսուի միայն թարգմանելիս:

## 6. Թոսայ Լի-ն.

## Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Ծանօթութիւն թուերի 1-ից մինչև 10ը ամեն գործողութիւններով  
և զննական, բանաւոր, մտաւոր և գրաւոր վարժութիւններով, Մանկա-  
վարժական Թերթի մէջ տպած հրահանգների համաձայն:

Ձեռնարկ՝ Հենչէլի թուարանական խնդիրներ:

## Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Ծանօթութիւն թուերի մինչև 100ը նոյն վարժութիւններով. պէտք  
է վարժութիւններով սովորեցնել աշակերտներին բառնալու խնդիր-  
ների մէջ պատահած դժուարութիւնները, Այս դասերին պէտք է տալ  
նաև ծանօթութիւն կեանքի այլ և այլ հանգամանքների մասին:

Նոյն ձեռնարկը և իբրև հրահանգ ուսուցչի համար Պեանքի հանգա-  
մանքների համեմատ թուարանութիւն պ. Ս. Մանգինեանի:

## Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Ծանօթութիւն ամեն թուերի հետ նոյն վարժութիւններով. տար-  
բական կոտորակներ, Շարունակութիւն թուարանական իրագիտու-  
թեան:

Երկրաչափական ծանօթութիւն մարմինների հետ զննական եղանակով և մակարդակ կազմելու վարժութիւններ:

Ձեռնարկ՝ Կեանքի հանգամանքների համեմատ թուարանութիւն, մասն վերջին:

7. Գրք—Ը—Ն:

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Կարգալուց առաջ վարժել տարրական գրութեան և գծագրութեան քարետախտակների վերայ. այնուհետև գրել բառեր, կազմելով նոցա վանկերից:

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մելանով և գրչով գրել խումբ խումբ միատեսակ թէ փոքր թէ մեծ տառեր ըստ իւրեանց ծագման գծերից, վարժեցնել բառեր և նախադասութիւններ զեղեցիկ գրելու:

Ձեռնարկ—Մակար Ցէր Սարգսեանի:

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյնը շարունակել, սկսելով և ուսաց գեղագրութիւնը՝ նոյն ձեռնարկը:

8. Երգէցող—Ը—Ն:

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մանկական երգեր խմբով և դաշնակի ձայնակցութեամբ:

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Աղբային և Եկեղեցական երգեցողութիւն:

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյնը:

Զրօսանք բոլոր բաժանմունքների համար հայրենագիտական տեղեկութիւններ ժողովելու նպատակով. երկրագործական ազատ պարագմունքներ. կազմութիւն զանազան ժողովածուների:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳԱՍԱՅՈՒՑԱԿ

ՎԱՐԺՈՑԻ.

	ՈՒԱՐԿԱՆԵՐ	ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ		
		Ա.	Բ.	Գ.
1.	Բարոյակրթութիւն	3	3	2
2.	Կրօն	1	2	2
3.	Զննական ուսումն	2	3	2
4.	Հայոց լեզու	4	4	4
5.	Ռուսաց	•	•	6

6. Քուարանութիւն	4	5	3
7. Գրութիւն	2	3	2
8. Երգեցողութիւն	2	2	1
	18	22	22

Ծանօթութիւն.

Այս զասացուցակը տարուայ ընթացքում ըստ հանգամանաց կարելի է փոփոխութեան ենթարկել:

ՀՈԳԵՒՈՒ ԳՊՐՈՅ.

1. Կրօն.

Ա. ԳԱՍԱՐԱՆ.

Սրբազան Պատմութիւն Հին և Նոր Կտակարանի  
2եռնարկ—Սրբազան Պատմութիւն Հայորդայ, Բերանացի բացադրու-  
թիւն եկեղեցական գլխաւոր տօների:

Բ. ԳԱՍԱՐԱՆ.

Նոյնը և ժամակարգութիւն:

Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Համառօտ պատմութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ,  
2եռնարկ՝ Մեկքիսեղեկ եպիսկոպոսի Մուրատեան (հանելոճ սորա  
միջից եկեղեցական մատենադրութեան և քաղաքական պատմութեան  
գերարեւել մասերը):

Հանգանակ հաւատոյ:

2. Հայոց լեզու.

Ա. ԳԱՍԱՐԱՆ.

Աշխարհարար. կաղմութիւն նախադասութեան — Ը. մասն քերա-  
կանութեան:

2եռնարկ ուսուցչի համար — Քերականութիւն պ. Ս. Պալասանեանի,  
խկ աշակերտի համար — պ. Կ. Կստամեանի Հիւսուածքի աշխարհա-  
րարը Յարմարաւոր ոտանաւորներ, Գրաւոր պարապմունք — կարգա-  
ցածի բովանդակութիւնը գրել:

Իրրե նախապատրաստութիւն գրաբանի, կարգալ Ս. Աւետարանի ա-  
ռակները:

Բ. ԳԱՍԱՐԱՆ.

Աշխարհարար. Բ. մասն քերականութեան, Աշակերտաց ընթերցա-  
նութեան համար ընարել մի որ և է յարմարաւոր զիրք (զօր. Անա-  
հիգ, Իօսող կաղնի և այլն): Անգիր ոտանաւորներ, Գրաւոր պարապ-

մունք — ոտանաւորները արձակի փոխել: պարզ շարադրութիւններ տարուայ դասընթացի գիտութիւններին:

Գրարառ. Ա. մասն քերականութեան, Ընթերցանութեան գիրք Ծաղկաքաղի Ա. մասն պ. Կ. Կոստանեանի. Քերականութեան ձեռնարկ՝ Խոնարհումն բայից և հոլովումն անուանց պ. Կ. Կոստանեանի, Գրաւոր պարագմունք — թարգմանել գասագրքից գրաբանից աշխարհաբար:

#### Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Աշխարհաբար. ծանօթութիւն արեւմտեան աշխարհաբարի, Աշակերտաց համար ձեռնարկ «Ճաշակ Հայ մատենագրութեան» . կարդալ և փոխադրել արեւելեան աշխարհաբարի բերանացի և գրաւոր, Գրաւոր պարագմունք տարուայ դասընթացի գիտութիւններին:

Գրարառ. Բ. մասն քերականութեան, պարզ շարադրութիւն, Ձեռնարկ՝ Ծաղկաքաղի Բ. մասն պ. Կ. Կոստանեանի և Գարագաշեան քերականութիւն, Գրաւոր պարագմունք — թարգմանել աշխարհաբարից գրարառ. փոխադրել ոտանաւորները արձակի:

#### 3. Աստուծոյ լէզու.

#### Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն, թարգմանութիւն և գրութիւն (արտագրելով և թելատրելով). անգիր ոտանաւորներ:

Ձեռնարկ. Нашъ другъ Корфа կամъ книга для чтенія Паульсона և կամ մի այլ գիրք համապատշաճ ընտրութեամբ:

#### Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն, թարգմանութիւն, գրութիւն (թելատրութիւն), Անգիր ոտանաւորներ, Ծանօթութիւն պարզ նախադասութիւնների, հոլովումն կանոնաւոր անուանց և խոնարհումն կանոնաւոր բայերի, Ձեռնարկ՝ Дѣтскій Міръ 1 ч. Ушинскаго:

#### Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն, թարգմանութիւն, կարգացածը ուսերէն պատմել, Անգիր ոտանաւորներ, Ոտանաւորները արձակի վերածել և գրել, Անկանոն անունների և բայերի հոլովումն և խոնարհումն:

Ձեռնարկ՝ Христоматія Поливанова:

#### 4. Մտքի մտքի քա.

#### Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Թուարանութիւն. թուարանական չորս գործողութիւնները ամբողջ թուերի հետ, Ձեռնարկ՝ Կեանքի հանգամանքների համեմատ թուարանութիւն պ. Ս. Մանգինեանի:

Երկրաչափական գծագրութիւն նկարչութեան հետ:

## Բ. ԳԱՍԱՐԱՆ.

Թուարանութիւն — թուարանական չորս գործողութիւնները կոտորակներին հետ: Չեռնարկ՝ թուարանական խնդիրներ Սիմէօնեանի և Վարձեղեանի:

Տարրական երկրաչափութիւն (Գծաչափութիւն):

## Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Թուարանութիւն. Երեքի կանոնները:

Հանրահաշիւ (Ալգեբրա). Ալգեբրայական չորս գործողութիւններ-հաւասարութիւններ Ա. աստիճանի. յարաբերութիւններ:

Տարրական երկրաչափութիւն (Հարթաչափութիւն):

## 5. Ընդհանուր պատճառ-բխան.

## Բ. ԳԱՍԱՐԱՆ.

Արեւելք և Յունաստան:

Չեռնարկ Վ. Կլտերի, Թարգ. պ. Ն. Գուկասեանի:

## Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Հոռոմ:

Նոյն ձեռնարկը:

## 6. Ընդհանուր աշխարհագրո-բխան.

## Ա. ԳԱՍԱՐԱՆ.

Աշխարհագրութեան Բնական և Աստեղաբաշխական տարերբը: Չեռնարկ — պ. Ն. Սիմէօնեանի:

## Բ. ԳԱՍԱՐԱՆ.

Ասիա, Աֆրիկա, Ամերիքա և Աւստրալիա:

Նոյն ձեռնարկը:

## Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Եւրոպա:

Նոյն ձեռնարկը:

## 7. Հայոց պատճառ-բխան և Աշխարհագրո-բխան Հայաստանի.

## Բ. ԳԱՍԱՐԱՆ.

Հայոց պատմութիւն կենսագրական եղանակով և Հայաստանի Աշխարհագրութիւն:

## 8. Ռուսաց պատճառ-բխան և Աշխարհագրո-բխան Ռուսաստանի.

## Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Ռուսաց պատմութիւն կենսագրական եղանակով և Ռուսաստանի Աշխարհագրութիւն (Ռուսաց լեզուով):

## 9. Բնակչանդան-Ռի-ն.

Ա. ԴԱՍԱԲԱՆ.

Բնակչանդան երկր թագաւորութիւնները.

Բ. ԴԱՍԱԲԱՆ.

Նոյնը

Գ. ԴԱՍԱԲԱՆ.

Նոյնը.

## 10. Չայնաֆրո-Ռի-ն.

Ա. ԴԱՍԱԲԱՆ.

Չայնաստիճանների սկզբնական վարժութիւն. Տեղութեան արժէքի վարժութիւններ. բաղխմանց ընդհանուր կրթութիւն. գրեկով և երգեկով ուսուցումն նախնական աձ. ալ. բձ. բկ. շարականի եղանակների, Ազգային երգեր.

Չեոնարկ Թաշճեանի.

Բ. ԴԱՍԱԲԱՆ.

Ուսուցումն նախնական գձ. գկ. դձ. դկ. շարականի եղանակների, Նոյն ձեոնարկը.

Գ. ԴԱՍԱԲԱՆ.

Ուսուցումն շարականի ութը ձայների դարձուածքների, մեղեդիների և եկեղեցական տաղերի.

Նոյն ձեոնարկը.

## 11. Գեղաֆրո-Ռի-ն.

Ա. և Բ. դասարանների մէջ Հայոց, Ռուսաց և Տաճկերէն (Տաճկահայտակների համար) զեղագրութիւն.

## 12. Գեղաֆրո-Ռի-ն և Նիսրլա-Ռի-ն.

Բոլոր երկր դասարանների համար.

## ՇԱԲԱԹԱԿԱՆ ԴԱՍԱՅՈՒՑԱԿ

## ԴՊՐՈՑԻ

ԱՌԱՐԿԱՆԵՐ	ԴԱՍԱԲԱՆՆԵՐ		
	Ա.	Բ.	Գ.
1. Կրօն.	3	3	3
2. Հայոց լեզու.	5	4	4
3. Ռուսաց .	5	6	6
4. Մատեմատիք.	4	4	4
5. Ընդհանուր Աշխարհագրութիւն.	2	2	3

6.	Ընդհանուր Պատմութիւն.	.	2	2
7.	Հայոց պատմութիւն և աշխարհագրութիւն.	.	2	.
8.	Ռուսաց պատմութիւն և աշխարհագրութ.	.	.	3
9.	Բնական պատմութիւն.	2	3	2
10.	Չայնագրութիւն.	4	2	2
11.	Գծագրութիւն և նկարչութիւն.	2	1	1
12.	Գեղագրութիւն.	3	1	.
		Գումար.	30	30
			30	30

**ԳՊՐԱՆՈՅ**

1. Կրօն.

Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Քրիստոնէական վարդապետութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ՝  
2եռնարկ—Հրահանգ Մսերի:

Կարգ Աստուածապաշտութեան — Մեկնութիւն արարողութեան Ս.  
Պատարագի:

Ե. ԳԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն Հին Կտակարանի Հանդերձ բացաղրութեամբ:

Զ. ԳԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն Նոր Կտակարանի Հանդերձ բացաղրութեամբ:  
Եկեղեցական Տօմար:

2. Հայոց Էջմիածնի:

Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Աշխարհաբար. Տեսութիւն մատենագրութեան:

2եռնարկ—Ճաղկաքաղ հատուածք Հին և Նոր մատենագրութեան.

Վ. ԿՆԵՏԻԿ:

Գրարան. ընդարձակ քերականութիւն:

2եռնարկ—Տարերք քերականութեան Բագրատունւոյ:

Ընթերցանութեան գիրք—Եզնիկ և Ծաղկաքաղի Գ. մասը պ. Կ. Կոստանեանի:

Գրաւոր պարագմունք—շարաղրութիւն նկարագրական և պատմական  
բովանդակութեամբ: Անգիր հատուածներ:

Ե. ԳԱՍԱՐԱՆ.

Աշխարհաբար. Հայոց մատենագրութեան պատմութիւնը մինչև ԺԲ.  
դարը:

Գրարան. շարաղրութիւն՝ Ճառեր:

Ընթերցանութեան գիրք՝ Հատընտիրք, Վենետիկ և Գ. գիրք Խորենացւոյ, Անգիր հատուածներ:

Զ. ԳԱՍԱՐԱՆ.

Աշխարհաբար. Հայոց մատենագրութեան պատմութիւնը մինչև ժ.Վ. դարը:

Գրաբառ. շարագրութիւն—խորհրդածութիւններ:

Ընթերցանութեան գիրք—Լամբրոնացւոյ ճառերը, Անգիր հատուածներ:

3. Ռուսաց լեզու:

Դ. ԳԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն, թարգմանութիւն և բերանացի պատմութիւն Ռուսաց հեղինակների գրուածքներից, Առակներ և անգիր ոտանաւորներ:

Քերականութիւն — Վերլուծութիւն բարդ նախադասութիւնների, Գրաւոր պարագմունք — Փոխատրութիւն ոտանաւորների արձակի, թարգմանութիւն հայերէնից ռուսերէն:

Ե. ԳԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն, թարգմանութիւն և բերանացի պատմութիւն Ռուսաց հեղինակների գրուածքներից, Առակներ և անգիր ոտանաւորներ:

Քերականութիւն, Ստուգաբանութիւն, Զեռնարկ Грамматика Говорова, курсъ I и II.

Գրաւոր պարագմունք — շարագրութիւն նկարագրական բովանդակութեամբ:

Զ. ԳԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն և պատմութիւն Ռուսաց հեղինակների գրուածքներից, Անգիր ոտանաւորներ և արձակ գրուածքների հատուածներ:

Քերականութիւն — Համաձայնութիւն, Զեռնարկ Грамматика Говорова, курсъ III и IV.

Գրաւոր պարագմունք — շարագրութիւն պատմական բովանդակութեամբ:

Ծանօթութիւն.

Ընթերցանութեան և ոտանաւորների համար Գ. Ե. Զ. դասարանների մէջ առաջարկուած է. Ժուղովսկի, Պուշկին, Գոգոլ, Կրիլով, Գլխրոնտով, Կոլցով, Տօլստոյ, Գոնչարով, Նեկրասով, Լերմոնտով:

4. Ֆրանսերէն.

Դ. ԳԱՍԱՐԱՆ.

Նախապատրաստական ընթերցանութիւն և գրութիւն — Հրահանգ — Մարգոյի գասագրքի Ա. մասը քերականական կանոնների բացառու-

Թեամբս նոյն հրահանգների համեմատ գրաւոր վարժութիւնս Բերանացի թարգմանութիւն Մարգղի ընթերցանութեան համար նշանակած դիրահասկանալի հատուածների: Անգիր սերտողութիւն թեթե ոտանաւորների:

Ե. ԳԱՍԱՐԱՆ.

Մարգղի Բ. մասի հրահանգները քերականական կանոնների բացազրութեամբ: Գրաւոր վարժութիւն նոյն հրահանգների համեմատ: Բարգմանութիւն նկարագրական և պատմական հատուածներից Մարգղի: Անգիր սերտողութիւն առակների հատուածների և ոտանաւորների:

Զ. ԳԱՍԱՐԱՆ.

Մարգղի Գ. մասի հրահանգները քերականական կանոնների բացազրութեամբ: Գրաւոր վարժութիւն նոյն հրահանգների համեմատ: Բերանացի թարգմանութիւն Լըվրէի ծաղկաբաղից: Անգիր սերտողութիւն ոտանաւորների ( հատուածներ ):

5. Հանրահաշիւ.

Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Ինքնապատկութիւն, արմատ, անհամաչափ քանակութիւններ, Քանակութիւններ կոտորակ և բացասական աստիճաններով: Արմատներով հաւասարութիւնների, Հաւասարութիւն Բ. աստիճանի: Յառաջատութիւն:

2 հոնարկ — Руководство Алгебры Малицина и Буренина, Алгебра Бычкова, Задачник Пржевальскаго.

Ե. ԳԱՍԱՐԱՆ.

Լոգարիթմոս ( նշանակ ). անյայտ աստիճաններով հաւասարութիւններ, անորոշ հաւասարութիւններ, Հաւասարութիւնների հետազոտութիւն:

Նոյն ձեռնարկները:

Զ. ԳԱՍԱՐԱՆ

Պրկնութիւն հանրահաշուի. Նիւտոնի բինոմը. կարգեր. անորոշ գործակիցների եղանակ. Ալգեբրայական քանակութիւնների ամենամեծ և ամենափոքր նշանակութիւնները:

Պրկնութիւն թուարանութեան:

6. Երկրաչափութիւն.

Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Գծաչափութիւն և հարթաչափութիւն:

2 հոնարկ Руководство къ Геометрии Давидова.

Ե. ԳԱՍԱՐԱՆ.

Ծաւալաչափութիւն:

Նոյն ձեռնարկը:

Զ. ԳԱՍԱՐԱՆ.

Պրկնութիւն երկրաչափութեան:

## 7. Եռանկյունաչափություններ.

Ձ. ԳԱՍԱՐԱՆ.

Հարթ եռանկյունաչափություններ,  
 Չեռանարկ — Тригонометрія Малинина.

## 8. Տեղագիտություններ.

Ձ. ԳԱՍԱՐԱՆ.

Համառոտ աստղաբաշխություններ,  
 Չեռանարկ — Космография Малинина.

## 9. Ընդհանուր պարսոսություններ.

Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Միջին դարեր.  
 Չեռանարկ — Հուլյան և Ելոփայսկիյ.

Ե. ԳԱՍԱՐԱՆ.

Նոր դարեր.  
 Չեռանարկ — Ելոփայսկիյ.

Ձ. ԳԱՍԱՐԱՆ.

Նորագոյն ժամանակ և կրկնություններ ամբողջ ընդհանուր պատմություններ,  
 Նոյն ձեռնարկներ.

## 10. Հայոց պարսոսություններ.

Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Հին պատմություններ մինչև Գ. դարը,  
 Ե. ԳԱՍԱՐԱՆ.

Գ. դարից մինչև ԺԲ. դարը,  
 Ձ. ԳԱՍԱՐԱՆ.

ԺԲ. դարից մինչև ԺԳ. դարը,  
 Կրկնություններ ամբողջ Հայոց պատմություններ.

## 11. Ռուսաց պարսոսություններ. (Ռուսաց լեզուով):

Ե. ԳԱՍԱՐԱՆ.

Հին պատմություններ մինչև ԺԷ. դարը,  
 Չեռանարկ Ելոփայսկիյ.

Ձ. ԳԱՍԱՐԱՆ.

Նոր պատմություններ ԺԷ. դարից մինչև ԺԳ. դարը,  
 Նոյն ձեռնարկներ.

Կրկնություններ ամբողջ Ռուսաց պատմություններ.

## 12. Բնագիտություններ (Ֆիզիքա).

Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Փորձնական ֆիզիքա — Մազնիսականություններ, Ելիքարականություններ և  
 ընդհանուր տեղեկություններ միւս զորությունների մասին.

Չեռանարկ — Բնագիտություն Տէրաէրեանի.  
 Ե. ԳԱՍԱՐԱՆ.

Գալվանականություններ, ջերմություններ, ջրաբաշխություններ, օդաչափու-  
 թիւն և ձայն.

Չեռանարկ — Физика Малинина  
 Ձ. ԳԱՍԱՐԱՆ.

Չօրություններ, մեքենաներ, շարժողություններ, լոյս,  
 Նոյն ձեռնարկներ.

Կրկնություններ ամբողջ ընթացքի՝ լրացմամբ.

## 13. Քիմիա.

Գ. ԳԱՍԱՐԱՆ.

Անզործարանաւոր քիմիա.  
 Չեռանարկ Основания Химии Бокій.

Ե. ԳԱՍԱՐԱՆ.

Գործարանաւոր քիմիա:

Նոյն ձեռնարկը:

14. Մարդակազմութիւն և բնութագրութիւն.

Զ. ԳԱՍԱՐԱՆ.

Համառօտ՝ մարդու կազմուածքը և կեանքը:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳԱՍԱՑՈՒՑԱԿ

ԳՊՐԱՆՈՅԻ.

ԱՌԱՐԿԱՆԵՐ

ԳԱՍԱՐԱՆՆԵՐ.

		ԳԱՍԱՐԱՆՆԵՐ.		
		Գ.	Ե.	Զ.
1.	Կրօն . . . . .	3	2	3
2.	Հայոց լեզու . . . . .	2	2	2
3.	Տեսութիւն մատենագրութեան . . . . .	4	•	•
4.	Հայոց մատենագրութեան պատմութիւն . . . . .	•	3	3
5.	Ռուսաց լեզու . . . . .	5	4	3
6.	Ֆրանսերէն . . . . .	4	4	3
7.	Մատեմատիքական զիտութիւններ . . . . .	4	4	4
8.	Ընդհանուր պատմութիւն . . . . .	2	2	3
9.	Հայոց պատմութիւն . . . . .	2	2	2
10.	Ռուսաց պատմութիւն . . . . .	•	2	2
11.	Ֆիզիքա . . . . .	2	3	3
12.	Քիմիա . . . . .	2	2	•
13.	Մարդակազմութիւն և բնախօսութիւն . . . . .	•	•	2

Գումար 30 30 30

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳԱՍԱՑՈՒՑԱԿ

ՃԵՄԱՐԱՆԻ.

ԱՌԱՐԿԱՆԵՐ

ԼԱՍԱՐԱՆՆԵՐ.

		ԼԱՍԱՐԱՆՆԵՐ.		
		Ա.	Բ.	Գ.
1.	Ընդհանուր եկեղեցական պատմութիւն . . . . .	2	•	•
2.	Մեկնութիւն Ս. Գրոց . . . . .	•	2	2
3.	Եկեղեցական մատենագրութիւն Հայոց . . . . .	•	•	3
4.	Հայոց լեզու . . . . .	2	•	•
5.	Նոր մատենագրութիւն Հայոց . . . . .	2	•	•
6.	Քննական քերականութիւն . . . . .	2	•	•
7.	Հնախօսութիւն Հայաստանի . . . . .	•	3	•
8.	Տրամաբանութիւն . . . . .	2	•	•
9.	Մանկավարժութիւն . . . . .	2	•	•
10.	Բարոյական Փիլիսոփայութիւն . . . . .	•	•	2
11.	Հոգեբանութիւն . . . . .	•	4	•
12.	Մետոդիքա . . . . .	•	•	2
13.	Ընդհանուր գրականութիւն . . . . .	2	2	2
14.	Ռուսաց գրականութիւն . . . . .	2	2	2
15.	Գերմաներէն . . . . .	3	3	4
16.	Ֆրանսերէն . . . . .	3	2	1

Գումար 22 18 18

( Շ-ր-ն-ի-է-է ):